Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
մարտի 26-ի N 358-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲՈՒԾՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԵՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՍՈՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են բուծողի իրավունքի տրամադրման համար ներկայացված հայտի և իրավունքի տրման վերաբերյալ տեղեկատվության, առաջարկված և հավանության արժանացած սորտի անվանումների հրապարակման հետ կապված հարաբերությունները: Բուծողի իրավունքի տրման և սորտերի հավանության արժանացած անվանումների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է լիազոր մարմնի էլեկտրոնային կայքում:

2. Բուծողի իրավունքի տրամադրման համար ներկայացված հայտի և իրավունքի տրման վերաբերյալ տեղեկատվության, առաջարկված և հավանության արժանացած սորտի անվանումների հրապարակումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին) «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն):

ԳԼՈՒԽ 2
ԲՈՒԾՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԵՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՍՈՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

3. Նոր սորտի պահպանության նպատակով բուծողի իրավունքի տրամադրման համար ներկայացված հայտը և իրավունքի տրման վերաբերյալ տեղեկատվությունը,

առաջարկված և հավանության արժանացած սորտի անվանումների հրապարակումները պարունակում են պարտադիր կամ լրացուցիչ տեղեկատվություններ:

4. Բույսերի նոր սորտերի պահպանության միջազգային միության (այսուհետ՝ ՈՒՊՈՎ) Պրիզմա (PRISMA) գործիքով ներկայացնելու դեպքում տրվում է միջազգային հղման համար, որը որպես լրացուցիչ տեղեկատվություն կարող է ներառվել հրապարակվող տեղեկատվության մեջ:

5. Առաջարկվող անվանումների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է հրապարակվել բուծողների իրավունքների նոր դիմումների վերաբերյալ տեղեկատվության հետ միասին: Հնարավոր է, որ դիմումի ներկայացման կամ հրապարակման պահին բուծողը չկարողանա անվանում առաջարկել: Նման դեպքերում բուծողը կարող է տրամադրել իր կողմից գրավոր հաստատված երաշխավորագիր, որի հիման վրա դիմումը կհրապարակվի: Երբ առաջարկվող անվանումը հասանելի դառնա, այն պետք է հրապարակվի անվանումներին վերաբերող բաժնում:

6. Բուծողի իրավունքի տրամադրման հայտերը պետք է հրապարակվեն բույսերի համապատասխան ցեղի և տեսակի բուսաբանական անվանմամբ՝ ըստ այբբենական կարգի:

7. Բուծողի իրավունքի տրամադրման համար հայտ ներկայացնելու դեպքում պարտադիր հրապարակման ենթակա է հայտի համարի, հայտատուի, հայտի լրացման ամսաթվի, սորտի առաջարկված անվանման, բուծողի կողմից լիազորված անձի վերաբերյալ (անուն, ազգանուն, բնակության հասցե, քաղաքացիություն) տեղեկատվությունը: Միջազգային գրանցամատյանում գրանցված լինելու դեպքում լրացուցիչ տեղեկատվություն է համարվում հղման համարը, առաջնայնությունը՝ պետության կամ կազմակերպության ծածկագիրը և ամսաթիվը, ներկայացուցիչը, լիազորված անձի տվյալները (եթե հայտատուն բուծողը չէ), սորտի նկարագիրն ու լուսանկարները:

8. Բուծողի իրավունք տրամադրելու և անվանումը գրանցելու դեպքում պարտադիր հրապարակման ենթակա են առաջարկված և հավանության արժանացած սորտի անվանումը և այն գրանցելու ամսաթիվը: Միջազգային գրանցամատյանում գրանցված լինելու դեպքում լրացուցիչ տեղեկատվություն են համարվում հղման

համարը, հայտի ներկայացման ամսաթվի, բուծողի, նրա ներկայացուցչի (եթե հայտատուն բուծողը չէ) մասին տեղեկատվությունը, սորտի նկարագիրն ու լուսանկարները:

9. Առաջարկված անվանման փոփոխության դեպքում հրապարակման ենթակա են հայտի համարը, նախկինում առաջարկված սորտի անվանումը, նոր առաջարկված սորտի անվանումը և հայտի ներկայացման ամսաթիվը: Միջազգային գրանցամատյանում գրանցված լինելու դեպքում լրացուցիչ տեղեկատվություն են համարվում հղման համարը, լիազորված անձի տվյալները (եթե հայտատուն բուծողը չէ), սորտի նկարագիրն ու լուսանկարները:

10. Բուծողի իրավունքի տրամադրման հայտի լրամշակման կամ այն մերժելու մասին հրապարակվող տեղեկատվությունը պարտադիր պետք է պարունակի հայտի համարի, հայտատուի, հայտը ներկայացնելու ամսաթվի, սորտի առաջարկված անվանման, բուծողի կողմից լիազորված անձի վերաբերյալ, ինչպես նաև հայտը մերժելու կամ լրամշակման ուղարկելու ամսաթվի մասին տեղեկությունները:

11. Բուծողի իրավունքը դադարելու մասին հրապարակվող տեղեկատվությունը պետք է պարունակի հայտի համարի, հայտատուի, հայտը ներկայացնելու ամսաթվի, սորտի առաջարկված անվանման, բուծողի կողմից լիազորված անձի և բուծողի իրավունքի դադարեցման ամսաթվի մասին տեղեկատվությունը: Միջազգային գրանցամատյանում գրանցված լինելու դեպքում լրացուցիչ տեղեկատվություն են համարվում գրանցման համարը և բուծողի իրավունքի դադարեցման պատճառը:

12. Պահպանվող սորտի անվանման փոփոխության առաջարկի դեպքում պարտադիր հրապարակման ենթակա են բուծողին շնորհված իրավունքի համարը, իրավունք շնորհելու ամսաթիվը, բուծողի իրավունքը կրողի, սորտի անվանման, սորտի առաջարկված նոր անվանման, նոր առաջարկի ներկայացման ամսաթվի վերաբերյալ տեղեկատվությունները: Միջազգային գրանցամատյանում գրանցված լինելու դեպքում լրացուցիչ տեղեկատվություն են համարվում հղման համարը, սորտի նկարագիրն ու լուսանկարները:

13. Պահպանվող սորտի նոր անվանման գրանցման դեպքում պարտադիր հրապարակման ենթակա են բուծողին շնորհված իրավունքի համարը, շնորհման

ամսաթիվը, բուծողի իրավունքը կրողի մասին տեղեկությունները, սորտի նախկին անվանման և սորտի նոր անվանման գրանցման ամսաթվի վերաբերյալ տեղեկատվությունը: Միջազգային գրանցամատյանում գրանցված լինելու դեպքում լրացուցիչ տեղեկատվություն են համարվում հղման համարը, սորտի նկարագիրն ու լուսանկարները:

14. Հայտատուին կամ վերջինիս ներկայացուցիչներին վերաբերող փոփոխությունների դեպքում հրապարակվում են հայտի համարի, բուծողի ներկայացուցչի, առաջարկված անվանման, նախկին հայտատուի, նոր հայտատուի, նախկին լիազորված անձի, նոր լիազորված անձի, փոփոխության ամսաթվի վերաբերյալ տեղեկատվությունները: Միջազգային գրանցամատյանում գրանցված լինելու դեպքում լրացուցիչ տեղեկատվություն են համարվում հղման համարը, հայտի ներկայացման ամսաթվի տեղեկությունները, սորտի նկարագիրն ու լուսանկարները:

15. Բուծողի իրավունքը կրողների կամ ներկայացուցիչների փոփոխության դեպքում պարտադիր հրապարակման ենթակա են բուծողին շնորհված իրավունքի համարը, այն շնորհելու ամսաթիվը, սորտի անվանումը, բուծողի իրավունքի նախկին կրողի, նոր լիազորված անձի փոփոխության ամսաթվի մասին տեղեկությունները: Միջազգային գրանցամատյանում գրանցված լինելու դեպքում լրացուցիչ տեղեկատվություն են համարվում հղման համարը, սորտի նկարագիրն ու լուսանկարները:

16. Հայտատուի (նոր և նախկին), բուծողի (նոր և նախկին) ներկայացուցչի (լիազորված անձի), բուծողի իրավունքը կրողի և նախկին կրողի վերաբերյալ տվյալները հրապարակվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

17. Նոր սորտի պահպանության նպատակով բուծողի իրավունքի տրամադրման համար ներկայացված հայտը և իրավունքի տրման վերաբերյալ տեղեկատվությունը, առաջարկված և հավանության արժանացած սորտի անվանումը, անվան փոփոխությունը հրապարակվում են կազմակերպության կողմից՝ ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում:

18. UPOV (ՈՒՊՈՎ) համակարգի կողմից սահմանված գաղտնի կամ սահմանափակ հասանելիություն ունեցող տեղեկությունները հրապարակման ենթակա չեն: Դրանք կարող են տրամադրվել միայն սորտի տարբերակիչ հատկանիշը, միատարրությունը և կայունությունը փորձարկող մարմիններին:

19. Բուծողի իրավունքի տրամադրման համար ներկայացված հայտի և իրավունքի տրման վերաբերյալ տեղեկատվության, առաջարկված և հավանության արժանացած սորտի անվանումների հրապարակման հետ կապված բողոքները և դիմումները քննարկվում են լիազոր մարմնի կողմից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ ստացման օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ